ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

2024-2025 ուստարի

2024-2025 ուստարում Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում կրթության որակի ապահովման գործընթացներն իրականացվել են՝ համաձայն նախապես հաստատված տարեկան աշխատանքային պլանի:

Օգոստոս ամսից աշխատանքներ են տարվել ՄԿԾ պատասխանատուների, հոգեբանի, ՌԿ պատասխանատուի և Կարիերայի կենտրոնի պասսխանատուների հետ՝ ՌԾ-ն և Բարելավման ծրագրին համահունչ աշխատանքային պլաններ կազմելու նպատակով: Ուստարվա ավարտին կատարողականների և հաշվետվությունների ուսումնասիրությունը վկայեց, որգրեթե ամբողջապես կատարվել են նախատեսված բոլոր աշխատանքները:

Սեպտեմբեր ամսին ՈւԽ առաջին նիստի ընթացքում իրականացվել է որակի ապահովման ուսանողական հանձնաժողովի ընտրություն: Այս տարի ևս պահպանվել է նույն սկզբունքը՝ յուրաքանչյուր մասնագիտությունից մեկ ուսանող:

ՌԿ պատասխանատուի և տնօրենի ՈւԱԳ տեղակալի հետ վերանայվել է ՌԿ-ից օգտվելու կարգը: Վերանայման արդյունքում սահմանվել են ինչպես գրականությունից (դասագրքեր, մասնագիտական և գեղարվեստական գրականություն, հանրագիտարաններ և այլն), այնպես էլ տեխնիկայից օգտվելու կանոնները, դրանց խախտման դեպքում կիրառվող տույժերը: Նոր կարգը հնարավորություն է տալիս ուսանողներին և աշխատողներին օգտվել ՌԿ ռեսուրսներից ավելի կազմակերպված, արդյունավետ և պատասխանատու ձևով՝ ապահովելով ռեսուրսների պատշաճ օգտագործումը:

Հոկտեմբեր ամսին իրականացվել է հարցում 1-ին կուրսի ուսանողների շրջանում: Հարցման նպատակն էր բացահայտել նոր ընդունված ուսանողների նախնական տպավորությունները ուսումնական գործընթացի, միջավայրի և կազմակերպչական կողմերի վերաբերյալ: Արդյունքները ընդհանուր առմամբ գոհացուցիչ են, ինչը վկայում է ուսումնական տարվա մեկնարկի հաջող կազմակերպման մասին: Հարցման վերլուծությունը կցված է հաշվետվությանը (**Հավելված 1**):

Ըստ ՈԱՊ աշխատանքային պլանի և ըստ բարելավման տարեկան ծրագրի նախատեսված էր կազմել ղեկավար կազմից աշխատակիցների բավարարվածությունը բացահայտող հարցաշար: Հարցերը միավորվել են դասավանդողների բավարարվածությունը վերհանող հարցաշարում զետեղված հարցերին, և իրականացվել է մեկ միասնական հարցում (**Հավելված 2**): Հարցման նպատակն էր պարզել աշխատակիցների բավարարվածության մակարդակը տարբեր աշխատանքային ուղղություններով, բացահայտել բարելավման կարիք ունեցող ոլորտները և նպաստել ավելի արդյունավետ կառավարմանը:

Համաձայն ՈԱՊ աշխատանքային պլանի՝ նոյեմբեր ամսին նախատեսվում էր Հիմնադրամում իրականացվող հարցումների էլեկտրոնային տարբերակների մշակում, սակայն վերոնշյալ 2 հարցաշարերի թվայնացումն իրականացվել է սեպտեմբեր ամսին՝ նպատակ ունենալով ապահովել դրանց ավելի արագ կիրարկումը, տվյալների արդյունավետ հավաքագրումն ու մշակումը: Մյուս հարցաշարերը թվայնացվել են համապատասխան ժամկետներում: Բացի այդ իրականացվել է նաև հարցաշարերի վերանայում, որի արդյունքում, ի թիվս մի շարք փոփոխությունների, ներգրավվել են ռեսուրսների կիրառելիությունը և հասանելիությունը

վեր հանող հարցեր: Այս լրացումները նախատեսված էին բարելավման տարեկան ծրագրով և նպատակ ունեն ապահովել ավելի խորացված և համակողմանի վերլուծություն: Ուսանողներին և դասավանդողներին ուղղված նմանատիպ հարցաղրումները հնարավորություն են տալիս իրականացնել համակարգված ուսումնասիրություններ՝ ուղղված կրթական միջավայրի և կազմակերպչական գործընթացների շարունակական բարելավմանը:

ՈԱՊ աշխատանքային պլանով նախատեսված էր իրականացնել «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության մշտադիտարկում՝ ոլորտի գործատուի հետ համագործակցությամբ՝ ծրագրի վերանայման և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթություն առաջարկելու ակնկալիքով: Գործատուի հետ քննարկումները, ինչպես նաև դասավանդողների և ուսանողների շրջանում իրականացված հարցումների արդյունքները վկայեցին, որ շուկայում պահանջարկ ունի մազերի երկարացման ծառայությունը: Ինչպես նաև, գործատուն կարևորել է մազերի կտրման մոդուլի այնպիսի ժամաբաշխում, որը թույլ կտա մոդուլն ուսումնասիրել 2 տարվա ընթացքում: Սակայն, գործնական դասընթացների արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների գնահատման, համապատասխան նյութերի ձեռքբերման հնարավորությունների քննարկման անհրաժեշտությունից ելնելով՝ ծրագրի վերանայման գործընթացը հետաձգվել է մինչև հաջորդ ուստարի:

Իրականացվել է դասավանդողների գնահատման գործիքի վերանայում: Հաշվի առնելով փորձագիտական խմբի խորհրդատվությունը՝ գործիքում ներառվել են հետազոտական աշխատանքների իրականացման, ղեկավարման և օտար լեզուների տիրապետման չափանիշները:

Վերանայվել է նաև ամեն տարի 2-րդ կուրսի ուսանողների կողմից իրականացվող կրթության որակի գնահատման գործիքը: Մասնավորապես՝ գործիքը թվայնացվել է, և ավելացվել են նոր բաժիններ, որոնք ներառում են նյութատեխնիկական բազայի, ստացված գիտելիքների և հմտությունների, ինչպես նաև ուսանողներին տրամադրված ծառայությունների վերաբերյալ հարցեր: Այս փոփոխությունները նպատակ ունեն առավել համապարփակ գնահատել ուսումնական գործընթացի արդյունավետությունը ուսանողների տեսանկյունից: Գործիքը կիրարկվել է: (**Հավելված 3**)

Ուստարվա ընթացքում դասալսումներ են իրականացվել թե՛ սկսնակ և թե՛ փորձառու դասավանդողների մոտ: Դասալսումների ավարտին իրականացվել են քննարկումներ՝ կրթության որակի բարելավման, դասավանդման արդյունավետության բարձրացման նպատակով: Դասալսումների վերլուծությունները ցույց են տալիս, որ որոշ դասավանդողների մոտ դեռ կաղում են ինտերակտիվ մեթոդների կիրառումը, թվային տեխնիկայից օգտվելու հմտությունները: Զուգահեռաբար, շատերի մոտ էլ զարգացել են վերոնշյալ հմտությունները: Այս մասով բարելավումներ իրականացնելու նպատակով առաջարկվում է իրականացնել ներքին վերապատրաստում կամ կարիք ունեցող դասավանդողներին ներառել այլ կազմակերպությունների կողմից իրականացվող դասընթացներում:

Ուսումնասիրվել է փոխադարձ դասալսումների մատյանը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ որոշ դեպքերում դասալսողները չեն ձևակերպում դասալսման նպատակը, իսկ որոշ դեպքերում, թեև ձևակերպում են, եզրակացության հատվածում արդյունքները պատշաճ կերպով չեն արտացոլվում: Բացի այդ, որոշ դասալսումների դեպքում դասի ընթացքի նկարագրությունը չափազանց ծավալուն է, ինչը բարդացնում է վերլուծությունը և հիմնական դիտարկումների տարբերակումը:

Որոշ դասալսողներ խուսափում են առաջարկություններ և մեկնաբանություններ կատարելուց:

Ելնելով վերլուծության արդյունքներից՝ առաջարկվում է հաջորդ ուսումնական տարում փոխել դասալսումների ձևաչափը՝ մատյանը փոխարինելով ավելի հստակ և կառուցվածքային գնահատման թերթիկներով: Թերթերը կներառեն դասի հիմնական բաղադրիչները գնահատող հստակ չափանիշներ և բաժիններ, որոնք նախապես կքննարկվեն և կհաստատվեն տնօրինության կողմից, ինչպես նաև թույլ կտան դուրս բերել դասի ուժեղ և բարելավման ենթակա կողմերը: Այս փոփոխությունը կնպաստի դասալսումների պրոցեսի արդյունավետության բարձրացմանը և արդյունքների նպատակային օգտագործմանը:

Իրականացվել է հարցում՝ հետազոտական աշխատանքներից ուսանողների և դասավանդողների բավարարվածությունը վեր հանելու նպատակով: Համակողմանի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ թե՛ դասավանդողները և թե՛ ուսանողները դրական են գնահատել հետազոտական աշխատանքների իրականացման փորձառությունը: Դասախոսները կարևորել են ստեղծագործական, վերլուծական գործընթացը և ուսանողների ոգևորվածությունը, իսկ ուսանողները՝ նոր գիտելիքները և համագործակցության հնարավորությունները: Երկու խմբում էլ հիմնական խոչընդոտ է դիտարկվել՝ նյութերի ձեռքբերումը, ռեսուրսների և ինֆորմացիայի հասանելիությունը: Ներկայացված ժամանակացույցին համապատասխան աշխատանքի կազմակերպումը երկուսի մոտ էլ հիշատակվել է որպես դժվարություն: Դասախոսները գոհ են ուսանողների մոտիվացիայից և արձանագրում են արդյունքների կիրառելիությունը, իսկ ուսանողները՝ մասնագիտական և անձնային զարգացումից, ստեղծագործական մտածողության ձևավորումից: Ինչ վերաբերում է բարելավման առաջարկներին, ապա եթե դասավանդողները կենտրոնանում են կազմակերպչական և մեթոդական խնդիրների վրա (հանդիպումների գրաֆիկ, դասընթացների անհրաժեշտություն, տեխնիկական ապահովում), ուսանողները ավելի շատ ընդգծում են մոտիվացնող թեմաների ընտրության, նյութերի հասանելիության և փորձարարական բաղադրիչի ավելացման մասին: (**Հավելված 4, 5**)

Հետազոտական աշխատանքների համակարգողի, հանձնաժողովի անդամների և տնօրենի՝ ՈւԱԳ տեղակալի հետ հանդիպման ընթացքում քննարկվել է ուստարվա մեկնարկին գործարկված ուղեցույցը, վեր են հանվել որոշ խնդիրներ, որոնք վերացնելու նպատակով որոշում է կայացվել վերանայել այն, մասնավորապես, ավելացնել աշխատանքների իրականացման, վերահսկման, ամփոփման և արխիվացման մասին դրութներ և գնահատման սանդղակ:

Իրականացվել է ISATCOVE առցանց գործիքի կիրառմամբ հաստատության ինքնագնահատում, որի արդյունքում վեր են հանվել որպես գերազանցության կենտրոն վերջինիս գործունեության ուժեղ և թույլ կողմերը, ինչը հնարավորություն է տվել ձևավորելու հիմնավորված պատկեր հաստատության ներկա դիրքի մասին՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային չափանիշների համատեքստում: Արդյունքների ամփոփման արդյունքում ՍԵՊՖԱ-ն ԵԿՀ (ETF)-ի կողմից արժանացել է «Commitment to excellence» հավաստագրի: Այս ճանաչումը վկայում է հաստատության շարունակական զարգացման մասին:

Զարգացման պլան մշակելու նպատակով ՈԱ պատասխանատուն փետրվար ամսին Սլովենիայի Նովա Գորիցա քաղաքում մասնակցել է ԵԿՀ-ի կողմից կազմակերպված գերազանցության կենտրոնների առաջին ձմեռային ճամբարին, որի ընթացքում քննարկվել են զարգացման ռազմավարական ուղղությունները, բարելավման մեխանիզմները և գործընկեր հաստատությունների լավագույն փորձը:

Ապրիլ ամսին ՈԱ պատասխանատուն հնարավորություն է ունեցել Ֆրանսիայի Աննոնեյ քաղաքում մասնակցել EfVET-ի TTT տարեկան միջոցառմանը, որի ընթացքում մասնակիցներն անդրադարձել են մասնագիտական կրթության ոլորտում հյուրընկալության ուսուցման արդի մարտահրավերներին, կրթական ծրագրերի վերանայման հնարավորություններին, որակի ապահովման մեխանիզմներին և ոլորտի գործատուների հետ համագործակցության մոդելներին։

Սեմինարների, աշխատարանների ձևաչափով կազմակերպված միջոցառումը հարթակ էր եվրոպական գործընկեր հաստատությունների հետ կապեր հաստատելու, կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն իրականացնելու և ՍԵՊՖԱ-ի փորձը միջազգային գործընկերների հետ կիսելու համար։

Իրականացվել է դասավանդողների գնահատում վարչական կազմի կողմից՝ հիմք ընդունելով դասավանդողների ներկայացրած հաշվետվությունները, դասալսումների արդյունքները: Յուրաքանչյուր դասավանդող ստացել է իր գնահատման թերթիկը, կատարել իր դիտարկումները: Որոշ դասավանդողների համար սահմանվել են բարելավման աշխատանքներ հաջորդ ուստարվա ընթացքում իրագործելու համար:

2024–2025 ուսումնական տարվա ընթացքում «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության ուսանողները կազմակերպել են բաց դռների օրեր, որոնց շրջանակում սպասարկել են իրական հաճախորդների։ Միջոցառման նպատակն էր ստեղծել իրական միջավայրում պրակտիկ փորձի ձեռքբերման հնարավորություն , ինչպես նաև ուսանողների մոտ ձևավորել մասնագիտական վստահություն և ծառայությունների մատուցման հմտություններ։

Հաճախորդները հնարավորություն են ունեցել իրենց դիտարկումներն ու առաջարկությունները տեղադրել բողոքների և առաջարկությունների արկղում, որը բացվել է ուսումնական տարվա ավարտին։ Կարծիքների ճնշող մեծամասնությունը եղել են դրական, հաճախորդները բարձր են գնահատել մատուցված ծառայության որակը, ուսանողների վերաբերմունքը։

Միևնույն ժամանակ, ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների մոտ որոշ հմտություններ դեռևս զարգացման կարիք ունեն, մասնավորապես, արագաշարժություն, ինքնավստահություն և համարձակություն մասնագիտական գործունեության ընթացքում։ Մեկ հոգի անդրադարձ էր կատարել լվացարանի տեխնիկական խնդրին, ինչը հարկավոր է ընդունել ի գիտություն՝ աշխատանքային միջավայրն ու սպասարկման որակը բարելավելու նպատակով:

Իրականացվել է արտադրական և նախաավարտական պրակտիկայի գնահատում ուսանողների կողմից: Արդյունքները ընդհանուր առմամբ գոհացուցիչ են: (**Հավելված 6**)

Կազմող՝ Ա. Դաբաղյան

08.07.2025թ.